

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

30 հունվարի 2015 թ.

N 24-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 28-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով.

Հրամայում եմ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2006 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործման և հետագա բազմացման նպատակով գրանցված բույսերի սորտերի ցանկը հաստատելու մասին» N 28-Ն հրամանի հավելվածի՝

1. «Ցորեն» բաժնում

- 1) «Բրիզանտինա» տողից հետո լրացնել «Գռացիա» տողով.
- 2) «Լավվարի 10» տողից հետո լրացնել «Լեբեդ» տողով.
- 3) «Կոռշկա» տողից հետո լրացնել «Հայասի» տողով.
- 4) «Յուբիլեյնայա 100» տողից հետո լրացնել «Յուկա» տողով.
- 5) «Նաիրի 68» տողից հետո լրացնել «Նեմբուր» տողով.
- 6) «Վան» տողից հետո լրացնել «Վասսա» տողով.

2. «Հաճար» բաժնում

- 1) «Արևիկ» տողից հետո լրացնել «Զանգեզուրի 7» տողով.
- 2) «Սպիտակահասկ» տողից հետո լրացնել «ՄՊՄ-82» տողով.

3. «Գարի» բաժնում

- 1) «Արարատի 7» տողից առաջ լրացնել «Ալաշկերտ» տողով.
- 2) «Կասկադ 7» տողից հետո լրացնել «Հայկ» տողով.
- 3) «Նուտանս տեղական» տողից հետո լրացնել «Շաքե» տողով.
- 4) «Վակուլա» տողից հետո լրացնել «Վան» տողով.
- 5) «Ցիկլոն» տողից հետո լրացնել «Ույծի 13» տողով.

4. «Ոլոռ» բաժնում «Զեռնոգրադսկի ուռոժայնի» տողից հետո լրացնել «Լիլի 5» տողով.

5. «Միսեռ» բաժնում

- 1) «Ալինա» տողից հետո լրացնել «Անուշ» տողով.
- 2) «Լիլիթ» տողից հետո լրացնել «Կայուն» տողով.
- 3) «Միփան» տողից հետո լրացնել «Սևահատիկ» տողով.

6. «Կարտոֆիլ» բաժնում

- 1) «Լորիս» տողից հետո լրացնել «Լուսինդա» տողով.
- 2) «Կոլետտե» տողից հետո լրացնել «Կոլումբա» տողով.

7. «Պոմիդոր» բաժնում

- 1) «Արա» տողից հետո լրացնել «Արանի» տողով.
- 2) «Արմինե» տողից հետո լրացնել «Արևաբույր» տողով.
- 3) «Կերեն» տողից հետո լրացնել «Հայասի» տողով.
- 4) «Հայկական շտամբովի 152» տողից հետո լրացնել «Հայկասար» տողով.
- 5) «Վայք» տողից հետո լրացնել «Վան» տողով.

8. «Տաքղեղ քաղցր» բաժնում «Նատալի» տողից հետո լրացնել «Նարինջ» տողով.

9. Ծաղկակաղամբ բաժնից հետո լրացնել նոր բաժին՝ հետևյալ բովանդակությամբ.

«Բրոկկոլի

Բրասիկա օլերացե L. կոմվար. բոտրիտիս (L.) Ալեֆ. վար իտալիկա Պլենկ
Brassica oleracea L. comvar. Botrytis (L.) Alef. var. italica Plenck

Հայասա».

10. Դդմիկ բաժնից հետո լրացնել նոր բաժին՝ հետևյալ բովանդակությամբ.

«Դդմակ

Cucurbita pepo L. var. melopepa d.

Լիպլուսին».

11. «Նաղդղ» բաժնում «Կաբերնե սովինյոն» տողից հետո լրացնել «Կաբերնե ֆրանկ» տողով:

Նախարար

Ս. Կարապետյան